

Հայկական հարց. հանրագիտարան, Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, Երևան, 1991, 348 էջ. Армянский вопрос. Энциклопедия, Главная редакция издательства армянской энциклопедии, Ереван, 1991, 348 с.

Հայկական հանրագիտարանի գլխավոր խմբագրությունը չույս ընծայեց «Հայկական հարց հանրագիտարանը», որին ընթերցող հասարակայնությունը վաղուց էր սպասում: Նրանում նախագահ բնութագրվում են հիմնահարցի առաջացումը և անցած ուղիները՝ կապված ներքին ու արտաքին բազմաթիվ հանգամանքների հետ: Ցույց է տրվում, որ Հայկական հարցը յարեմտահայտվյալն ազատագրման հարցն էր, և որ փրկության խնդիրն էր թուրքական վայրագ բռնություններից: Սուլթանական կառավարությունը, ձգտելով իրագործել իր պանիսլամական ծրագրերը, հայերին համարում էր խոչընդոտներ այդ ճանապարհին: Ուստի XIX դ. վերջերից, մամուլն ապահովում էր հայկականներից, նրանց ընդդեմը հասցրեց պետական մակարդակի: Օսմանյան բարձրաստիճան պաշտոնյաները բացահայտ հայտարարում էին, որ հայկական խոչընդոտը պետք է սրով ու կրակով վերացնել իրենց ճանապարհից: Բնական է, որ արևմտահայությունը պետք է պայքարեր իր գոյության համար: Հեղինակները մերժում են թուրք պաշտոնական և ոչ պաշտոնական շրջանների այն կեղծ դրույթը, թե հայերի հալածանքներն ու կոտորածները կիրառվել են նրանց մեղքով, թե իբրև հայերը մինչև XIX դ. վերջերը Օսմանյան կայսրությունում լավ են ապրել, օգտվել են նույնիսկ արտոնություններից, բայց որովհետև ըմբոստացել են սուլթանական վարչակարգի դեմ, փորձել են քայքայել կայսրությունը, ուստի պատժվել են:

Աշխատության մեջ ցույց է տրվում, որ հայ հասարակական-քաղաքական գործիչները 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ Հայկական հարցը դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա, ձգտել են քաղաքական ճանապարհով լուծել այն, ստեղծելով Արևմտյան Հայաստանում ինքնավարություն, եթե ոչ ինքնավարություն, գոնե անձի ու գույքի ապահովություն: Բնական է, որ մեծ տերություններին, նրանց այդ քայլը միանգամայն բնական էր, քանզի այդ տերությունները Բեռլինի կոնգրեսով պարտավորություն էին վերցրել հետևել Բ. Դուան կողմից բարենորոգումների կիրառմանը Թուրքիայի հայաբնակ վիլայեթներում: Բայց տեսնելով, որ մեծ տերությունները Հայկական հարցը շարաշահում են հօգուտ իրենց, լուղղակի և ռազմաքաղաքական պաշտպանում են սուլթանական կառավարությանը՝ ընդդեմ հայերի, արևմտահայ հասարակական-քաղաքական գործիչները, հետևելով ապստամբությանը օսմանյան լծից ազատագրված բալկանյան ժողովուրդների օրինակին, իրենց հայրենակիցներին գնացի կոչեցին: Մայրաքաղաքում հնչում է անվանի արևմտահայ գործիչ Խրիմյան Հայրիկի նշանավոր երկաթե շերեփի ձայնը, որն արձագանք է գտնում գավառներում:

Հեղինակները ցույց են տալիս, որ առաջ են գալիս հայդուկներ, հասարակական-քաղաքական կազմակերպություններ ու կուսակցություններ, որոնք նպատակ են դնում պայքարել օսմանյան բռնապետության դեմ և ազգը փրկել ոչնչացումից: Աշխատության գնահատելի կողմերից մեկն այն է, որ նրանում առաջին անգամ բերվում են բազմաթիվ ֆիդայիների կամ հայդուկների անուններ և բնութագրվում է նրանց հայրենասիրական դործունեությունը: Այդ նվիրյալ անունները խորհրդային պայմաններում տասնամյակներ շարունակ փակի տակ էին մնացել և անծանոթ էին մասսայական ընթերցողներին: Իբրև գնահատելի կողմ պիտի նշել նաև այն, որ բնութագրվում են քաղաքական կուսակցություններին իրենց ընդհանուր գործունեությամբ: Բարձր մակարդակով է շարադրված հատկապես դաշնակցության պատմությունը, նրա ապրած փոփոխություններով, մակընթացություններով ու տեղավորություններով հանդերձ՝ քաղաքական բարդ պայմաններում:

Հեղինակները ներկայացրել են արևմտահայության ազատագրական պայքարի և ինքնապաշտպանական մարտերի դրամաները, համառոտ, բայց բազմակողմանի տվել դրանց առաջացման, զարգացման ու պարտություն պատճառները: Նրանք հիմնականում կարողացել են վերաբերվել այն սխալ ու սուբյեկտիվ դրույթներին, որոնք մշակվել էին խորհրդային կարգերի աստիճաններին՝ պատժելով այդ գեպարի մասին: Դա վերաբերում է և՛ հայդուկային շարժմանը, և՛ կուսակցությունների ու կազմակերպությունների գործունեությանը, և՛ 1890-ական

թվականների կոտորածներին ու ինքնապաշտպանական մարտերին, ե՛ր Սասունի 1904 թ. ինքնապաշտպանությունը, և՛ զաշնակցական-երիտթուրքական համագործակցությանը, և՛ 1915 թ. Մեծ հոգեհոսին և այլ հարցերին, Բոլշևիկյան պատմագիտությունը հատկապես 1920—1950-ական թվականներին այդ իրադարձությունները կամ լուռության էր մատնում կամ էլ դրանց մասին խոսելիս մեղադրում էր հայերին, մանավանդ կուսակցություններին, և օբյեկտիվորեն պաշտպանության տակ էր առնում սուլթանական ու երիտթուրքական ոճրագործներին: Ընդդեմ է, 1960—1980-ական թվականներին մեր պատմագիտությունն արդեն շարժում էր այդ դոգմալուծող, բայց ամեն ինչ դեռ չէր կատարված: Այժմ պայմաններն այլ են և պատմաբանները կարող են վեր հանել ճշմարտությունը: Եվ հեղինակներն այդ ուղղությամբ կատարել են լուրջ քայլեր:

Հանրագիտարանում համառոտ, բայց հիմնավոր ընդգրկում են Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի ու Ռուսաստանի կառավարող շրջանների քաղաքականությունն լարեմտահայտության հանդեպ և մերկացվում է նրանց շահամուլ վարքագիծը: Միաժամանակ նշվում է, որ այդ երկրների դեմոկրատիան, հակառակ կառավարող շրջաններին, կանգնել է արևմտահայության կողմը և պաշտպանել նրա ազատագրական պայքարը: Մեր ժողովրդի համար անմոռանալի են այնպիսի մարդկանց անունները, ինչպիսիք են Ա. Ֆրանսը (Ֆրանսիա), Ա. Վեգները (Գերմանիա), Ժան Ժորեսը (Ֆրանսիա), Ջ. Բրայսը (Անգլիա), Ֆ. Պրեսանտեն (Ֆրանսիա), Ի. Կնյուսը (Գերմանիա), Մ. Գորկին, Վ. Բրյուսովը (Ռուսաստան) և շատ ուրիշներ, որոնք պահանջում էին արեւելի թուրքական ոճրագործների հայաշինչ քաղաքականությունը և արգարության ամբողջ ուժով պատժել նրանց: Սակայն այս հումանիտարական ձեռքերին գրիչն էր, իսկ նյութական ու ռազմական ուժերը գտնվում էին նրանց երկրների կառավարողներին ձեռքից, որոնք, համագործակցելով օսմանյան տիրակալների հետ, ուղղակի և անուղղակի օժանդակում էին սրանց հանցավոր գործունեությանը:

Պահպանելի պետք է համարել նաև այն, որ հեղինակները պատմական դեպքերը շարադրելիս հասցնում են մինչև վերջ, ցույց տալով, թե ի՞նչ փուլեր ապրեցին դրանք և ինչ վախճան ունեցան: Դրա վնասանքով, անշուշտ, առաջանում են կրկնություններ, բայց այդպիսի կրկնություններն օգտակար են, քանզի շարադրանքը լարենում են ափսոսանքով մանի ու դուրամբար: Նման փաստերի հանդիպում ենք, երբ կարգում ենք, օրինակ, Հայկական հարցի, հայերի ցեղասպանության, կուսակցությունների, Սևրի պայմանագրի, Բաթումի 1918 թ. հունիսի 4-ի պայմանագրի, 1921 թ. մարտի 16-ի խորհրդա-թուրքական եղբայրական պայմանագրի և այլ հարցերի մասին հոգվածները:

Հաջող է կատարված աշխատության պատկերազարդումը: Հայտնի գործիչների նկարների հետ միասին զետեղված են նաև քաղաքների և գյուղերի պատկերները, որոնք դիտակցաբար, թե անգիտակցաբար մոռացության էին մատնված ժամանակի կողմից: Դրանցից են հատկապես ոչ բոլշևիկյան կուսակցությունների և կազմակերպությունների ներկայացուցիչները, շարքային հայդուկները, օտարերկրացի հայամեծ գործիչները և այլն:

Դրական պետք է գնահատել նաև այն, որ համապատասխան բաժիններում տեղադրված են զանազան տեսարժան վայրերի ու պատմական հուշարձանների պատկերները: Դրանք մի մասը հայտնի է ընթերցող հասարակայնությանը, իսկ մյուսն առաջին անգամ է գրվում շրջանառության մեջ:

Գրքի գնահատականն ավելի է բարձրանում նրանում զետեղված քարտեզներով, որոնց շնորհիվ ընթերցողը պարզ պատկերացում է կազմում հայկական վիլայեթների կամ նահանգների, 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրի, 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագրի, 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրի, նույն թվականի Բրեստ-Լիտովսկի պայմանագրի, 1915 թ. հայկական կոտորածների, 1919 թ. Փարիզի կոնֆերանսի, 1914—1917 թթ. կովկասյան ռազմաճակատի, 1918—1920 թթ. Հայաստանի Հանրապետության, Օսմանյան կայսրության անկման, 1920 թ. Սևրի պայմանագրի և այլ խնդիրների մասին:

Բայց այդ դրականի կողքին Հանրագիտարանում տեղ են գտել թերություններ: որոնց մասին կուղեմք համառոտակի խոսել: Աշխատության մեջ բերվում են գործիչների միանշանակությունն ու ազդանշանները: Անհրաժեշտ էր նշել նաև հայրանուններն ու ձեռագրվածքը: Քրա՞վ է, որոշ տեղերում անվում է, թե գործիչը նախնական կրթությունը ստացել է իր ձեռագրվածքում և հիշատակվում է այն: Սակայն դա անբավարար է: Անհատականալի է, թե

Քննչա մի շարք հոգովածներ անստորագիր են: Հոգովածների տակ սովորաբար նշվում է զգտագործված գրականությունը: Բայց բազմաթիվ տեղերում չի նշվում, ի՞նչ է հիշատակվում է խիստ անբավարար: Օրինակ՝ հայդուկների մասին կան բազմաթիվ գրքեր, բայց բերվում է սոսկ մեկը, այն էլ վերաբերում է միայն Սասունին: Թերի է բացատրված «Ֆիդայի» քառու նախ՝ այն պետք է լինի ֆեդայի, երկրորդ՝ նշանակում է ոչ թե զոհեր, այլ որևէ դադափարի համար զոհաբերվող Սարգ, դադափարին անձնուրաց նվիրված մարդ, շերմ հայրենասեր, ընդ որում, այդպիսի մարդիկ կային ոչ միայն հայոց, այլև այլ ժողովուրդների մեջ: Որոշ գործիչներ ներկայացված են միակողմանի: Հիշատակվում է, օրինակ, Գրիգոր Ջաֆյանի (Ջանշինի) միայն հայանշատ գործունեությունը, հայրենասիրությունը, մինչդեռ նա առաջին հերթին պատմաբան էր: Բոլոր նրանք, ովքեր (գրում են XIX դ. երկրորդ կեսի Ռուսաստանի ռեֆորմների պատմությունը, լին կարող շրջանցել այդ գիտնականին: Կան փաստական սխալներ. նշվում է, որ 1921 թ. Արմենական կուսակցությունը, վերակազմված հնչկյաններն ու ռամկավարները համախմբվելով կազմեցին Ռամկավար ազատական կուսակցություն (էջ 33), մինչդեռ արմենականները դեռ 1908 թ. էին միավորվել վերակազմվածների հետ ու կազմել Սահմանադրական ռամկավար կուսակցություն, իսկ 1921 թ. այդ կուսակցությունն ու վերակազմված հնչկյանների դեռ ինքնուրույն գործող մասը միանալով ստեղծեցին Ռամկավար ազատական կուսակցությունը:

Այդ թերությունները երկրորդական են և կարող են վերացվել, իսկ ընդհանուր առմամբ գիրքը հաջողված է: Հեղինակների կողմից, բազկացած լինելով հիմնականում մասնագետներին, առեղծել է մի կարևոր աշխատություն, որը պարզ ու հակիրճ պատկերացում է առաջին հայրենական հարցի մասին ընդհանրապես, նրա գործիչների մասին՝ մասնագործապես: Նավ է, որ գիրքը լույս է տեսել ռուսերեն: Անհրաժեշտ է այն հրատարակել նաև անգլերեն, ֆրանսերեն ժողովրդի պատմության ողբերգական ու հերոսական էջերը հասանելի կդառնան, հասարակական ու քաղաքական ավելի լայն շրջաններին:

Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Գումակուն Կիտաբյանների գրական